Աղտոտման համալիր կանխարգելման և հսկման (ԱՀԿՀ/IPPC) համակարգի ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հզորությունների զարգացում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ բնապահպանություն
Տևողությունը 24 ամիս
Իրականացման ժամկետ փետրվար 2013 –*փետրվար* 2015
Բյուջե 1 մլն եվրո

Շահառու մարմին՝
ՀՀ բնապահպանության նախարարություն

ԵՄ անդամ երկրներ

Գլխավոր գործընկեր - Գերմանիայի շրջակա միջավայրի, բնապահպանության և միջուկային անվտանգության նախարարություն
Կրտսեր գործընկեր – "Տրազսա Գրուպ" Ագրարային փոխակերպման ընկերություն, Իսպանիա

Ծրագրի նկարագիր

Նպատակ՝ Աջակցել ՀՀ բնապահպանության նախարարությանը (ԲՆ), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցելով, ներդնելու ինտեգրված (բնապահպանական) աղտոտման կանխարգելման և վերահսկման համակարգ՝ ստեղծելով թույլտվությունների տրամադրման և հսկման համար համապատասխան իրավական, ինստիտուցիոնալ, վարչական և ընթացակարգային շրջանակների մշակման հիմքեր, ինչպես նաև իրականացնել շահագրգիռ կողմերի համար անհրաժեշտ կարողությունների հզորացման միջոցառումներ:

Բաղադրիչներ՝

Բաղադրիչ I: ԱՀԿՀ-ի ներդրման համար օրենսդրական հենքի մշակում
Բաղադրիչ II: Համալիր թույլտվությունների տրամադրման և հսկման մեխանիզմների և ենթակառուցվածքների ամրապնդում
Բաղադրիչ III: Կարողությունների զարգացում
ԲաղադրիչIV:Երկու փորձնական ծրագրերի ընտրություն և իրականացում

Ձեռք բերված արդյունքներ

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա) Հայաստանում բարելավված և հետագայում զարգացած աղտոտման կանխարգելման և հսկողության ինտեգրման օրենսդրական հիմք,
բ) Հայաստանում ինտեգրված թույլտվության և վերահսկման բարելավված և ամրապնդված ինստիտուցիոնալ և կառուցվածքային համակարգ,
գ) բնապահպանության նախարարության և այլ շահառու մարմինների պատասխանատուների կարողությունները բարելավվել են՝ ինտեգրացված թույլտվության ընթացակարգերի, մոնիտորինգի, ստուգման և կիրառման ոլորտում:
դ) բնապահպանության նախարարության հմտությունները և փորձը ինտեգրացված թույլտվության ոլորտում ուժեղացել է պիլոտային ծրագրերի միջոցով:

Լրացուցիչ տեղեկատվություն